ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարության և Տաջիկստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական վիճակագրական գործակալության միջև համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարությունը և Տաջիկստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական վիճակագրական գործակալությունը՝ այսուհետև՝ "Կողմեր", հիմնվելով վիճակագրության բնագավառում համագործակցության զարգացման և երկու պետությունների վիճակագրական մարմինների փոխգործունեության ակտիվացման փոխադարձ շահագրգռվածության վրա, համաձայնվեցին ներքոհիշյալի վերաբերյալ.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը կիրականացնեն համագործակցություն հետևյալ հիմնական ուղղություններով.

վիճակագրական ցուցանիշների համակարգերի ստեղծման և գործունեության մեթոդաբանական մշակումների, վիճակագրական դիտարկումների անցկացման, այդ թվում մարդահամարների, առավել կարևոր ընտրանքային հետազոտությունների և բնակչության հարցումների ծրագրերի և մեթոդների փոխանակում.

վիճակագրական տեղեկատվության փոխանակում Կողմերի կողմից համաձայնեցված թեմաներով.

պետությունների և առանձին տարածաշրջանների սոցիալ-տընտեսական դրության վերաբերյալ վիճակագրական հրատարակությունների և հրապարակումների, տարեգրքերի, ժողովածուների, տեղեկագրերի, հաղորդագրությունների և ակնարկների փոխանակում.

հայեցային վիճակագրության ներդրում և ըստ "Անկախ Պետությունների Համագործակցության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի" չորսանիշ կոդերի ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման վերաբերյալ տեղեկատվության փոխանակում.

ըստ համապատասխան միջպետական համաձայնագրերում նախատեսված անվանացանկի և ժամկետների՝ ինվեստիցիոն և սպառողական ապրանքների մատակարարման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման կազմակերպում և փոխանակում.

վիճակագրության բնագավառում համակարգիչների, տեղական ցանցերի և ծրագրային մշակումների օգտագործման փորձի փոխանակում, ավյալների ավտոմատացված բանկերի ստեղծման, նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման գործում փոխադարձ օգնության ցուցաբերում.

վիճակագրական պրակտիկայում ազգային հաշիվների և միջազգային նորմերին և ստանդարտներին համապատասխանող այլ հաշվառման և վիճակագրության համակարգերի ներդրման գործում փորձի փոխանակում և փոխադարձ օգնության ցուցաբերում, ինչպես նաև համապատասխան

գների վիճակագրության, համապատասխան վիճակագրական ցուցանիշների հաշվարկի մեթոդաբանության բնագավառներում փորձի փոխանակում և փոխադարձ օգնության ցուցաբերում; սպառողական ապրանքների և ծառայությունների գների ու սակագների մակարդակի փոփոխման, բնակչության կենսամակարդակի և սոցիալ-տնտեսական զարգացման այլ ցուցանիշների վերաբերյալ տվյալների փոխանակում.

բնակչության զբաղվածության, գործազրկության վերաբերյալ տվյալների և աշխատանքային ռեսուրսների շուկայի ձևավորման բնագավառում վերլուծական հետազոտությունների փոխանակում.

տնտեսավարող սուբյեկտների սկզբնական և հաշվապահական հաշվառման հարցերի վերաբերյալ փորձի փոխանակում.

պայմանագրային հիմունքներով վիճակագրության բնագավառում համատեղ գիտական հետազոտությունների և կիրառական մշակումների, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հիմնախնդիրների այլ միջոցառումների իրականացում.

վիճակագրական տեղեկատվության տարածում, անհրաժեշտության դեպքում, համատեղ ձեռնարկությունների ստեղծում.

վիճակագրական մարմինների գործունեության նոր ուղղությունների ուսումնասիրության և փորձի փոխանակման նպատակով մասնագետների փոխանակման իրականացում:

ՀՈԴՎԱԾ 2

Տեղեկատվության փոխանակությունը համագործակցության շրջանակում կատարվելու է Կողմերի ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 3

Տնտեսա-վիճակագրական տեղեկատվության փոխանակումը կիրականացվի Կողմերի ունեցած կապի միջոցներով, պայմանավորված ժամկետներում՝ ըստ համաձայնեցված սխեմաների, ձևերի և ցուցանիշների համակարգերի:

Տնտեսա-վիճակագրական տեղեկատվության միջգերատեսչական փոխանակման աշխատանքային լեզուն հանդիսանում է ռուսերենը:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը կօժանդակեն իրենց ենթակա կազմակերպությունների, հիմնարկությունների գործունեության ընդհանուր կամ կոնկրետ ոլորտներում ուղղակի պայմանագրերի կնքմանը:

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերը համատեղ կքննարկեն Համաձայնագրի մեկնաբանման և իրականացման ընթացքում առաջացած հիմնախնդիրները և կձեռնարկեն միջոցներ դրանք լուծելու ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում, պաշտոնական պատվիրակությունների մակարդակով կքննարկվի սույն Համաձայնագրի, կնքված պայմանագրերի իրականացման ընթացքը:

ՀՈԴՎԱԾ 6

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել, լրացվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են առանձին Արձանագրություններով, որոնք հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 7

Սույն Համաձայնագիրը կնքվում է անժամկետ և ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման վերաբերյալ տեղեկացնելու պահից:

Սույն Համաձայնագիրը կարող է չեղյալ հայտարարել Կողմերից մեկը, և այն իր գործողությունը դադարեցնում է մյուս Կողմից դրա վերաբերյալ հաղորդում ստանալու օրվանից վեց ամիսը լրանալուց հետո:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման տարաձայնությունների դեպքում նախապատվությունը կտրվի ռուսերեն տեքստին:

Իրականացված է քաղաք Երևանում 1998 թվականի Դեկտեմբեր 10-ին երեք օրինակից, հայերեն, տաջիկերեն և ռուսերեն լեզուներով: Ընդ որում, բոլոր տեքստերը հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարության կողմից	Տաջիկստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական վիճակագրական գործակալության կողմից